ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԻԼԻԱ Բ-Ի ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ՝ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՊԱՏԱՀԱԾ ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏԻ ԱՌԻԹՈՎ

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԻԼԻԱ Բ-ԻՆ

Թբիլիսի

Եղբայրական սիրով բերում ենք Ձեզ Մեր խոր վիշտը Ձեր օրհնյալ երկրում տեղի ունեցած բնության արհավիրքների առթիվ, որոնք մեծ նյութական վնասներ են պատճառել և խլել մարդկային զոհեր:

Ընդունեցեք Մեր խորազգաց ցավակցությունները: Աղոթում ենք, որ Աստված օգնության հասնի, և վերականգնվի խաղաղ ու անվտանգ կյանքը նաև Մեզ սիրելի Վրաստանում:

Մաղթում ենք Ձեզ քաջառողջություն և հայտնում Ձեզ Մեր մշտական համակրանքը ու եղբայրական սերը:

Սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
4 փետրվարի 1987 թ.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Ի սրտե շնորհակալություն ենք հայտնում Ձեզ աղոթքի և ցավակցության համար՝ Վրաստանում պատահած տարերային աղետի առիթով: Մաղթում ենք Ձեզ քաջառողջություն և երկարակեցություն՝ ի փառս Հայ Եկեղեցու և եղբայրական հայ ժողովրդի:

Սիրով ի Քրիստոս՝

ԻԼԻԱ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ

Թբիլիսի,
5 փետրվարի 1987 թ.

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԻԼԻԱ Բ-ԻՆ

Թբիլիսի, Ս. Սիոնի տաճար

Հաստատում ենք Մեր 4 փետրվարի 1987 թ. հեռագիրը: Կրկին անգամ հայտնում ենք Մեր ցավակցությունը ձեր երկրում՝ եղբայրական Վրաստանում տեղի ունեցած աղետի առթիվ, որտեղ եղան բազմաթիվ մարդկային զոհեր: Բարեհաճեցեք ընդունել Մեր եղբայրական համեստ լուման՝ հարյուր հազար ռուբլու չափով, աղետյալների ընտանիքներին օժանդակելու գործում: Հաճեցեք հայտնել Մեզ այն հաշվի համարը, որով կարելի է փոխանցել վերոհիշյալ գումարը:

Աղոթում ենք վրացական քույր Եկեղեցու բարօրության և եղբայրական ժողովրդի բարգավաճման համար:

Մխիթարվեցեք բարեբաշխ Ս. Հոգով:

Եղբայրական սիրո ողջույնով՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
10 փետրվարի 1987 թ.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱՉԳԵՆ Ա-ԻՆ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն, սիրելի եղբայր ի Քրիստոս,

Ձեր ցավակցությունը և ցանկությունը՝ հարյուր հազար ռուբլի փոխանցելու՝ օգնություն ցույց տալու համար աղետյալների ընտանիքներին, Մեր սիրտը լցրեց անկեղծ երախտագիտությամբ Ձեր և ձեր Առաքելական Եկեղեցու նկատմամբ: Հայտնում ենք, որ նշված գումարը Դուք կարող եք փոխանցել հետևյալ հաշվին. Պետբանկի վրացական գրասենյակի Թբիլիսիի քաղաքային վարչության հաշիվ՝ համար 000700024:

Ձերդ Սրբությանը մաղթում ենք քաջառողջություն և Աստուծո օգնությունը Ձեր հայրապետական գործունեության մեջ:

Եղբայրական սիրով՝

ԻԼԻԱ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ

Թբիլիսի,
11 փետրվարի 1987 թ.

*
* *

Առ ի գիտություն հայտնում ենք, որ Վրաստանի հայոց թեմի առաջնորդարանը նույնպես 40.000 ռուբլու օգնություն է տրամադրել աղետյալների ֆոնդին: